

## Մասնագիտական կրթություն [1]

Ելնելով մարդկային կապիտալի որակի նկատմամբ պահանջների մեծացումից՝ բարձրագույն կրթության և մասնագիտական զարգացման համակարգերի բարելավումը դառնում է տնտեսական զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Մարդկային կապիտալի զարգացումը ստեղծում է բարենպաստ ցիկլ՝ նպաստելով արտադրողականության աճին ու, հետևաբար, ընդլայնելով կրթության ոլորտի զարգացմանն ուղղվող ռեսուրսները: Այս ոլորտում չկա միակ լավագույն փորձ, սակայն լավագույն համակարգերն ունեն որոշ ընդհանրություններ.

- Դրանք շարունակաբար նորարարություններ են իրականացնում և նոր մոտեցումներ փորձարկում:
- Դրանք ուղղորդվում են բիզնեսների և ազգային տնտեսության զարգացման գերակայությունների անընդհատ փոփոխվող պահանջներով:
- Դրանք ունեն առանցքային շահառուներին շահագրգռող և ուղղորդող առաջնորդներ:
- Դրանք նաև ունեն սերտ կապեր համաշխարհային կրթական միջավայրի հետ:

Ի-Վի Զոնսալթինգին հաճախ են դիմում բարձրագույն կրթության և մասնագիտական զարգացման ոլորտներում ռազմավարություններ մշակելու հարցով: Մեր փորձը տարածվում է կրթական ծառայություն մատուցողներին նոր նախաձեռնություններ գործարկելու հարցում օժանդակությունից մինչև ոլորտային բարեփոխումների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը: Մեր աշխատակիցներից շատերը դասավանդում են տարատեսակ առարկաներ (մրցունակություն, ռազմավարություն, ֆինանսներ և այլն) այնպիսի առաջատար կրթական հաստատություններում, ինչպիսիք են Երևանի պետական համալսարանը և Հայաստանի ամերիկյան համալսարանը: Մենք խթանում ենք «սովորել գործելով» (learning by doing) մոտեցումը և գլխավորապես կիրառում բովանդակության մատուցման նախագծային (project based) մեթոդը: Մասնագիտական զարգացման ոլորտում մենք մշակում և դասավանդում ենք հատուկ դասընթացներ դեկավար օղակների համար, ինչպես նաև հանդես ենք գալիս որպես երիտասարդ ձեռներեցների մենթորներ:

Visit also:



**Source URL:** <http://ev.am/hy/modernizing%20education/professional-education>

### Links

[1] <http://ev.am/hy/modernizing%20education/professional-education>